№ 12 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 30 **1890** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 30 № 12

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 ր.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿի» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆը (Բարօնական և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան նկարիչների պատկերահանդէսը. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մանկական գրքերի առիթով. Էջմիածնի մատենադարանի մասին. Նամակ Մոսկվայից. Նամակ Հին-Նախիջեւանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քայլ ևս դէպի առաջ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ
I

Այս օրերս բացվել է Թիֆլիսի „Փառքի տաճարում" մեր տեղական նկարիչների պատկերահանդէսը։ Տեղական ասելով, մենք աչքի առջև ունենք այն բոլոր նկարիչներին, որոնք ապրելով Կովկասում, կամ աւելի լաւ է ասել Թիֆլիսում, այս բոպէիս մասնակցում են վերոյիշեալ պատկերահանդիսին, չը նայելով որ այդ նկարիչներից ոմանք հայեր են, միւսները ռուսներ, իտալացիք, գերմանացիք, վրացիք և այլն։

Մտնելով պատկերահանդէսը, գեղարուեստի հետ քիչ թէ շատ ծանօթ այցելուի աչքին է ընկնում նախ և առաջ հետաքրքիր բնաւորիչ զանազանութիւնը եւրօպացի և մեր բուն կովկասցի նկարիչների ստեղծագործութիւնների ձևի մէջ. առաջինները հասկացան թէ նկարիչներից իւրաքանչիւրը, եթէ ուզում է իր գեղարուեստի մէջ կատարելագործութեան հասնել, ձգտել իր գործում վիրտուօզ դառնալու,—նա պէտք է իր ոյժերը սահմանափակի նկարչութեան մի յայտնի տեսակի շրջանակների մէջ. ընդհակառակ հայը կամ վրացին և նոյն իսկ մեր ռուս նկարիչներից շատերը՝ դեռ ևս չեն հասկացել այդ ճշմարտութիւնը և ամեն մէկը հաւատացած է որ սպեցիալիզմ, նեղ մասնագիտութիւն ասված բանը՝ ամենևին հարկաւոր չէ նկարչին, աւելորդ բան է ամեն մարդու համար կատարելագործութեան հնարաւոր բարձրութեանը հասնելու։

Սակայն դա ընդհանուր ճշմարտութիւն է, ընդհանուր օրէնք է, ոչ թէ միայն նը-կարչութեան մէջ, այլ և երաժշտութեան, գրականութեան, բանաստեղծութեան, գիտութեան, բժշկութեան մէջ, վերջապէս ամեն բանում։ Ամեն բան փորձել, գիտութեան, գեղարուեստի կամ արհեստի ամեն տեսակ ճիւղերում ուզենալ յայտնվել,—դա ոչ թէ խելացի, ինքնաճանաչ, իր կոչմանը ծառայող բուն մասնագէտի յատկութիւնն է, այլ լոկ սիրողի, դիլէտանտի յատկութիւնը։

Երբ էք տեսել որ երևելի Տիցիան ուրիշ բան նկարէր, բացի մարդկային մարմնի պլաստիական գեղեցկութիւնները, ե՞րբ էք տեսել որ դէմքեր նկարող անմահ Բաֆաէլ դիցուք ծով նկարէր, ե՞րբ էք տեսել որ Ռեմբրանտ ուրիշ բան նկարէր, բացի մարդկային դէմքերը, ե՞րբ էք տեսել որ Այվազովսկուն որ և է նկար կատարելապէս աջողվեր, եթէ այդ նկարը չէ ներկայացնում ծովը, այն էլ անպատճառ մրրկալի կամ ալեկոծված ծովը և ոչ թէ խաղաղ դրութեան մէջ գտնվող ջրի մակերևոյթը։

Ամենաերևելի մարդկանցից շատերը, լինէին դրանք նկարիչներ, երաժիշտներ, գրողներ, գիտնականներ բանաստեղծներ և այլն, շատ անգամ տարիների ընթացքում եղել են միմիայն դիլէտանտներ, սիրողներ՝ մինչև որ գտել են իրանց մասնագիտութիւնը, իրանց կոչմանը համապատասխան արհեստի, գեղարուեստի կամ գրականութեան ճիւղը,— միայն այդ բոպէից սկսած, տոկունութեամբ կատարելագործվել շարունակելով այդ մասնագիտական ճիւղի մէջ՝ նրանք երևելի, մեծ մարդիկ են դարձել։

Մինչև որ Գոգոլ պատմական դասախօսութիւններ էր կարդում Կիեվի համալսարանում, նա երևելի չէր. և գիտութեան այդ ճիւղի մէջ սահմանափակելով իր ամբողջ մտաւոր ոյժերը՝ նա երբէք չէր էլ դառնայ մեծ մարդ, նա երբէք յայտնի Գոգոլ չէր դառնայ,—բայց նա երևելի դարձաւ ռուսաց ժողովրդական կեանքից վերցրած իր վէպերով։ Երևելի ռուս առակաւոս Կրիլով կատարեալ սիրող, դիլէտանտ էր մինչև որ փորձում էր իր ոյժերը թատրոնական անհամ պիէսաներ գրելում... բայց նոյն Կրիլով հոչակաւոր դարձաւ, անմահ հանճար դարձաւ՝ երբ սկսեց հեղինակել իր առակները։

Ոչ թէ միայն երաժշտական յայտնի հեղինակներից իւրաքանչիւրն ունի իր մասնաւոր, մասնագիտական ճիւղը երաժշտական ստեղծագործութիւններում, բայց մինչև անգամ և երաժշտական կատարողներից ամեն մէկը ունի իր սիրած, իր նախապատուած հեղինակին, որի ստեղծագործութիւնները մասնագիտաբար, աւելի կատարեալ կերպով կատարելու համար՝ առանձին կոչում է զգում իր մէջ։ Մի՞թէ երբէք չէք լսել որ հանճարեղ Ռուբինշտէյն, որը ամեն տեսակ երաժշտութիւն հրաշալի կերպով է կատարում, նա էլ ամենակատարեալ կերպով կատարում է Լիստի գրուածները, իսկ մի ուրիշ ածող, տիկին Եսիպովա, իր ամբողջ ըէպերտուարից առանձին նրբութեամբ կատարում է Շոպէնի գրուածները, և այլն և այլն....

Մասնաւորել իր ոյժերը գիտութեան, գրականութեան, գեղարուեստի մի յայտնի ճիւղի սահմաններում,—միակ միջոց է հասնելու մարդկային հանճարին ձեռնհաս կատարելագործութեան, միակ միջոց է այս կամ այն ճիւղի մէջ վիրտուօզ դառնալու.... Եւ դա մեծ ստեղծագործողների յատկանիշն է։

Ընդհակառակն ամեն բան փորձել և ամեն ճիւղում փորձվել, ոչ մի կէտի վրա չը մասնաւորել իր ոյժերը, ինչպէս հայերէն ասում են՝ միշտ պատէ պատ ընկնել,—դա յատուկ է միայն սիրողներին, կամ դիլէտանտներին։

Այդ է պատճառը որ մենք հրաժարվում ենք ճշմարիտ լուրջ կերպով վերաբերվել դէպի այնպիսի պատկերահանդէս, դէպի նկարչութիւնների այնպիսի ժողովածու, որի ստեղծագործութիւններին, որքան էլ սրտով ցանկանայինք, չենք կարող յատկացնել մեր վերև յիշած թէորիան, որը այդ տեսակ որոշ, անանցնելի սահման է դնում՝ մասնագիտութեան և դիլէտանտիզմի մէջ։

Եւ ճշմարիտ մտնելով մեր այժմեան պատկերահանդէսը, մարդս շուարած է մնում և նայելով պատկերների մեծ մասը, ինքն իրան ակամայ հարց է առաջարկում,—արդեօք ճշմարիտ մենք մասնագէտ նկարիչների, թէ միայն սիրողների, դիլէտանտների հետ գործ ունենք....

Եթէ դրանք մասնագէտներ են,—ինչի՞ նրանցից մեծ մասը պատէ պատ ընկնելով, նրանցից իւրաքանչիւրը (սակաւ բացառութեամբ, որոնց մասին յետոյ կը խօսենք) ծառայեցնում է իր վրձինը՝—և բնութեան, և մարդկային տիպերի, և կենդանագիրների և ժանրի նկարելուն.... Իսկ եթէ նրանք միմիայն դիլէտանտներ են, որոնք ընդունակ չեն մասնաւորել իրանց ոյժերը նկարչութեան մի յայտնի, որոշ ճիւղի մէջ,—այն ժամանակ թող նրանք չը սպասեն էլ մեզանից մի լուրջ կրիտիկայի.... Այդ տեսակներին, ինչպէս թատրոնական բեմի վրա խաղացող սիրողներին, կարելի է միմիայն ներողամտութեամբ վերաբերվել....

Բաւական չէ զրպանից հանել ակադեմիայից ստացած դիպլոմը և դրանով նը-կարչութեանն անծանօթ մարդկանց աչքերը շլացնել,—պէտք է և գործով ցոյց տալ թէ դուք ճշմարիտ արտիստներ էք, վիրտուօզներ էք, մասնագէտներ էք, և ոչ թէ միմիայն սիրողներ։

Եթէ, ընդհակառակն դուք այնքան համեստ էք, որ ձեզ միայն սիրող էք անուանում, այն ժամանակ ճշմարիտ չարժէ ժամանակ կորցնել, մօտենալով իւրաքանչիւր պատկերին՝ ցոյց տալու համար թէ այս ինչ պատկերի վրա երկինքը՝ երկնքին նման չէ, թէ այն ինչ պատկերի վրա նստած դրութեան մէջ նկարած դիւղացին՝ այնքան երկար ոտներ ունի, որ եթէ յանկարծ վեր կենար, նա մօտակայ խրճիթից բարձր կը լինէր, թէ մի երրորդ պատկերի վրա օդ չը կայ ամենևին, թէ մի չորրորդի վրա մարդու դէմքը և երկինքը նոյն գոյներով, նոյն ներկով է նկարած և այլն և այլն....

Իսկ եթէ դուք ձեզ մասնագէտներ էք համարում,—այն ժամանակ պէտք է լսէք և ընդունէք ամենախիստ քննադատութիւնն անգամ։

Այս տեսակ քննադատութիւն, մեր կարողութեան չափ, կը փորձենք անել հետևեալ անգամ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մանուկների ընթերցանութեան խնդրով զբաղվող ուսուցիչները և ուսուցչուհիները, անկասկած, նկատած կը լինեն որ մեր ունեցած մանկական գրքերը չեն կարողանում, ինչպէս հարկն է, բաւարարութիւն տալ իրանց փոքրիկ ընթերցողներին։ Նրանց կարողանում ոչ միայն այն պատճառով, որ նրանց թիւը շատ սահմանափակ է, այլ և գլխաւորապէս այն պատճառով, որ նրանք մեծ մասամբ անյարմար են գտնվում ծառայելու այն նպատակին, ինչի համար որ կոչված են։

Իսկ սրա մի գլխաւոր պատճառն էլ այն է, որ մեր գրականութեան այս ճիւղին վերաբերեալ գրքերն ու գրքոյկները ըստ մեծի մասին թարգմանութիւններ են, այսինքն՝ նրանց նիւթը առնված է մեր մանուկների համար խորթ, օտար ազգերի կեանքից. ներկայացնում են մեր մանուկներին օտարի կեանքը, շրջեցնում են նրանց՝ իրանց համար անծանօթ շրջաններում, խօսում են նրանց հոգու համար օտար ձայնով, դէպքերը, մարդիկ այն չեն, ինչին որ նրանք ընտելացած են։

Արանից կարելի է եզրակացնել այն համոզումը, որ թարգմանութեամբ կազմված գրքերը հեռու են մեր մանուկներին այն հոգեկան բաւականութիւնը պատճառելուց և այն առողջարար մտաւոր սնունդը տալուց, որին նրանք կարօտում են։ Մի փոքր մտածենում են նպատակին և արդիւնաւոր են հանդիսանում այն թարգմանութիւնները, որոնք ընդհանուր, հոգեբանական և գեղարուեստական համամարդկային նշանակութիւն ունեն, կամ որոնք յարմարվում են մեր կեանքին ու մեր մանուկների մտաւոր աշխարհին, այսինքն՝ որոնք փոխադրվելով հայացվում են։ Զը պէտք է մոռանալ, ի հարկէ, և այն հանգամանքը, որ որքան էլ մարքերի աղբիւրը օտար լինի, այնու ամենայնիւ կարող է և մի յայտնի չափով հասարակաց լինել, վերաբերվել ու համարվել ամեն ազգի, քանի որ մարդիկ նոյն կըրքերը և նոյն մտաւոր ու բարոյական պահանջները ունեն՝ ինչ երկրում և ընակվելիս լինեն նրանք, ինչ լեզուով և արտայայտելիս լինեն իրանց մտքերը։ Այդ ամենը գիտենալով ու խոստովանելով հանդերձ՝ ոչ ոք չէ կարող թարգմանական ու փոխադրական գրուածներին տալ այն առաւելութիւնը, որ միայն ինքնուրոյն գրուածների սեփականութիւնն է։ Ամենաննդարար մտաւոր կերակուրը սեփական կեանքից՝ հարազատ ոճով և ընտիր լեզուով կազմված աշխատութիւնը միայն կարող է տալ. սակայն, այդ տեսակ անունդից զուրկ է մեր գրականութեան մանկական բաժինը։

Բայց մանկական գրքերի մասին խօսելիս, նրանց քանակի ու որակի մասին դանդատելիս մենք մի կարևոր հանգամանք չը պէտք է մոռանանք։ Դա տպագրված գրքի վաճառման խնդիրն է։ Ինքնուրոյն գրողներ էլ կարող ենք ունենալ, ընտիր թարգմանողներ էլ, ընթերցող մանուկներ էլ, սակայն, որ գլխաւորն է՝ գիրք գնող չունենք։ Այդ պակասը պէտք է լրացնեն ծնողները, որոնց մեծ մասը չը գիտեն ինչ անեն, ուսուցիչները, որոնք այդ կէտում ընդհանրապէս անփոյթ են իրանց պարտաճանաչութեան մէջ։ «Գնող չունենք» ասելով՝ մենք տպագրական գործից մեծամեծ օգուտների ակնկալութեան ի դերև ելնելը չենք ակնարկում, գիտենալով որ մեր մանուկների ընթերցանութեան խնդիրը իրանց սրտին մօտիկ համարող հեղինակներն ու թարգմանիչները պատրաստ են գոհ մնալ և նրանով, որ իրանց լոյս հանած աշխատութիւնը կարողանայ դէթ իր ծախսը ծածկել։ Բայց եթէ հրապարակ գրված, ի վաճառ հանված 1,200 գրքից տարէնը ծախվում է առ առաւելն 50 օրինակ, էլ ինչպէս նրանք պէտք է միւս անգամ գրիչ առնեն ձեռքները՝ մանուկների համար մի գրուածք պատրաստելու....

Մանկական գրքոյկներին վիճակված մի այսպիսի անբաղդութիւն եթէ միայն անպէտք, անմիտ, աննպատակայարմար աշխատութիւններին պատահելիս լինէր, հասկանալի կը լինէր. բայց ինչ կասէք, երբ նոյն վիճակին են դատապարտված նաև նրանցից լաւերն ու ընտիրներն անգամ։ Մինչև մեզանում մանկական գրքոյկները ոչ թէ կարդացողներ, այլ գնողներ չունենան, մեր կարծիքով, ոչ ոք չի ցանկանայ մանուկների համար գրելով զուր ժամանակ ու արտամաչ լինել։ Մեր կարծիքով, մեր ուսումնարանների մանկավարժական ժողովներին է վերաբերում

մասնակցությամբ հրապարակ գրքի վերջին տարի ոգեկոչեցին Ռուսաստանի Գրողների միության անդամ Ս. Ս. Սմիրնովի հիշատակը։ Ս. Սմիրնովը ծնվել է 1888 թվականի հունվարի 1-ին։ Նրանց ասելով մի ծանր հիվանդություն։ Ս. Սմիրնովի գրքերը թարգմանվել են գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն, հայերեն, ռումիներեն, հունգարերեն, չեխերեն, սլովակերեն, սլովեներեն, հրվացերեն, սերբերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, ղազախերեն, ուզբեկերեն, թաթարերեն, ղրղզերեն, թուրքերեն, ֆարսերեն, ինչպես նաև էսպերանտոյի։ Ս. Սմիրնովի գրքերի ընդհանուր տիրաժը գերազանցել է 3000 հազար։

ՊՎՈՊՄ ՎԱՂՅՈՒՆՈՒՂՑՈՒՄ ՎԱԶՈՎՈՖՎ

Եղոգմանաղ Ց.

Ոչ վաղ դարերի վերջին Ռուսաստանի հարավային մասերում, հատկապես Ղրիմի թերակղզում, ինչպես նաև Կովկասի ստորոտներում, ինչպես նաև Ռուսաստանի հարավային մասերում, հանդիպում էին մի հոսանք, որը ոչ միայն ոչ ոքի չի հետաքրքրում, ոչ ոքի չի հետաքրքրում, ոչ ոքի չի հետաքրքրում։ Դրանք

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Նիւ Եորք, 28 մարտ։ Ամերիկայի Հայերի Ազգային Ժողովի առաջին նիստը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Մեծ Եկեղեցիի դահլիճին մէջ։ Ներկայ էին 100 մարդիկ։

Ս. Ն. Ազգային Ժողովը բացուեցաւ Ս. Գրոց ընթերցմամբ։ Ապա Ս. Գրիգորեան Ազգային Ուսումնարանի Տնօրէն Գրիգոր Գասպարեան ողջունեց ներկայները։ Ապա Ս. Գրիգորեան Ազգային Ուսումնարանի Տնօրէնը կարդաց Ազգային Ժողովի Գործադիր Մարմնի տարեկան զեկուցումը։ Զեկուցումը ամփոփեց Ազգային Ժողովի գործունէութիւնը։ Ապա Ս. Գրիգորեան Ազգային Ուսումնարանի Տնօրէնը կարդաց Ազգային Ժողովի Գործադիր Մարմնի ստացած նամակները

փոխադրած զորքը, որը մեղադրված է ստացադիր կեղծելու մէջ, քննվում է նահանգական դատարանում։ Քաղաքացիական պահանջողը, վաճառական Արժանով դեռ դատարանին չէ ներկայացել։ Էկսպերտների չը գալու պատճառով կանչված են բանկի հաշվապահը և նկարչության երկու ուսուցիչ։ Պաշտպանը Պետերբուրգի երդուեալ հաւատարմատար Անդրէեվսկին է։

ԼՕՆԴՕՆ, 28 յունվարի։ «Standard» լրագրի Շանխայից փետրվարի 7-ից ստացած տեղեկութիւններին նայելով, Սիբիրում ռուսաց զինուորված ոյժերի աւելանալու պատճառով, չինաց կառավարութիւնը զգուշության տեսակէտով, մեծ քանակութեամբ զորք կենտրոնացրեց Մանչուրիայում, և պատուիրեց Գերմանիայում մի քանի հազար մագազինային հրացաններ։

ՊԱՐԻԶ, 28 յունվարի։ Օրլէանի դուքսը այսօր դատարանին ներկայացաւ։ Դուքսը պատասխանելով նախագահի հարցմունքներին, ասեց, որ ինքը եկել է Ֆրանսիա զինուորական ծառայության մէջ մտնելու համար, և խնդրեց, որ իր գործի քննությունը յետաձգվի, ըստ որում ցանկանում է փաստաբան ունենալ։ Գործի քննությունը յետաձգված է մինչև չորեքշաբթի։

ՎԻԵՆՆԱ, 28 յունվարի։ Այստեղ լուրեր են պատում, որ Պանիցա և էլի չորս օֆիցեր երէկ հրացանի են առնված Սոֆիայում։ Ստամբուլովյան այս ունի, որ դա սարսափեցնող ներգործություն կունենայ զժգոհ օֆիցերների վրա, որոնք պաշտոն ունեն գաւառական զորաբաժիններում։ Բոլգարիայից ստացված բոլգարական կիսապաշտոնական հեռագիրները չափազանցնում են դաւադրությունը և պնդում են, որ դաւադիրները մտադիր էին սպանել պրինց Ֆերդինանդին, Ստամբուլովին և Մուտկուրովին. կասկածի տակ են դրված նոյնպէս և նախկին մինիստրները. հեռագիրներից երևում է, որ յիրաւի Բոլգարիայում յուզմունք է տիրում։

ԼՕՆԴՕՆ, 28 յունվարի։ Սոֆիայից տեղեկութիւններ են ստացված, որ պաշտոնական քննութիւններից երևում է, որ Պանիցա և նրա համախոհները մտադիր են եղել սպանել պրինց Ֆերդինանդին, Ստամբուլովին և Մուտկուրովին։ Ասվում են, որ դատի կենթարկվեն երկու անձինք, որոնք մինիստրական պաշտոն ունէին պրինց Ալէքսանդրին գահընկէց անելու բոպէին։ Եռանդուն միջոցներ են ձեռք առնված խաղաղությունը և հանգստությունը պահպանելու համար։ «Times» լրագիրը հաղորդում է, որ պրինց Ֆերդինանդի անուան հեծելազօրքի գնդի օֆիցերները վճռեցին միանալ Ստամբուլովի դէմ պատրաստվող ապստամբությանը։ Սոֆիայում մինիստրական ճգնաժամ է սկսված այն տարաձայնության պատճառով, որ պատահել է Տոպչեվի և Ստամբուլովի մէջ։ Վերջինը իր վրա առաջարկությունի պրեֆեկտի պարտաւորությունները, ըստ որում նա չէ կամենում ոչոքի հաւատալ այդ պաշտօնը։ Երեքշաբթի օր մինիստրների խորհուրդ կար։ Պրինց Ֆերդինանդը պատրաստականությունն յայտնեց հրաժարվելու գահից, եթէ միայն դրանով կարելի կը լինի ապահովացնել ներքին խաղաղությունը։ Բոլոր մինիստրները հակառակ էին այդ առաջարկությանը։ Ստամբուլովի տունը զինվորները պահապաններով է պահպանվում։ Բուրգասում, Վարնայում, Ռուշչուկում, Վիդդինում, Տիրնովայում և Ֆիլիպոպոլում գտնվող զորքերի գլխաւորներին առաջարկված է երկրորդ անգամ զորքին հաւատարմության երդում տալ պրինց Ֆերդինանդին։ Սոֆիայի բերդապահ գնդի 500 զինուոր պէտք է հեռանան մայրաքաղաքից, և դրանց կը փոխարինեն նոյնքան զինուորներ գաւառներից գալով։ Փոստային վարչության կառավարիչը խիստ ցենզուրա է նշանակել հեռագիրների համար և գաղտնի դրասենեակ՝ նամակների բովանդակությունը իմանալու համար։ Պալատի մօտ կանգնած պահապանները երկու ժամը մի անգամ փոխվում են։ Սոֆիայի երկաթուղային կայարանը պահպանվում է հետևակ զորքի մի վաշտով, և պահապանները ամեն ժամ փոխվում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի։ Այսօր վախճանվեց կոմս Պ. Ա. Վալուեվ։ Երէկ փակվեց փոխադարձ ապահովության ընկերությունների ներկայացուցիչների համագումար ժողովը։ Ժողովի նախագահը յայտնեց, որ համագումար ժողովի աշխատանքները աջող հետևանքներ կունենան։—«Новое Время» լրագրում հրատարակվեց Դրագան Յանկովի յունվարի 15-ին Պետերբուրգից ուղարկած շրջաբերականը իր բարեկամներին և համախոհներին, որի մէջ նա հերքում է լրագրական այն լուրերը, որ իբր թէ Յանկովականները պատրաստ էին պաշտպանել պրինց Ֆերդինանդին և խորհուրդ է տալիս՝ ընտրությունների ժամանակ դիմադրել կառավարական զորձակալների ազդեցությանը և զորքերի բռնությանը։—«Гражданинъ» լրագիրն ասում է, որ նախկին պետական գործիչ կոմս Վալուէվ վախճանվեց երեք սենեակից բաղկացած բնակարանում, հասարակ մահճակալի վրա, փոքրիկ ննջարանում։

ՍՈՖԻԱ, 29 յունվարի։ Պանիցայի մօտ խուզարկելու ժամանակ գտան բանտարկված վաճառական Խալոպկովին ուղղած նամակներ։ Այդ նամակները գաղտնագիր են. բայց, ինչպէս ասում են, ծածկագրի բանալին արդէն գտնված է։ Մինչև այժմ Պանիցա ոչինչ նշանաւոր ցուցմունքներ չարաւ դատաւորին։ Վերջին տեղեկությունների համեմատ, դաւադրության նպատակն էր փախցնել պրինց Ֆերդինանդին և սպանել Ստամբուլովին ու Մուտկուրովին։

ԲԵՐԼԻՆ, 29 յունվարի։ «Armee Verordungsblatt» լրագրում հրատարակված է բարձրագոյն հրաման 16-դ լեհարինգեան և 17-դ արևմտապրուսական զորաբաժիններ կազմակերպելու մասին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 26-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	91 ր.	35	»
Բերլինի վրա 100 մարկ —	44 »	65	»
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	30	»
Ոսկի — արժէ —	7 »	31	»
Մաքսային կուպոններ —	146 »	50	»
Արծաթ — — —	1 »	8	»
Բորսային դիսկոնտներ —	6 և	7%	»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 »	62	»
— — — — 2-րդ —	99 »	87	»
— — — — 3-րդ —	99 »	62	»
— — — — 4-րդ —	99 »	75	»
— — — — 5-րդ —	99 »	62	»
— — — — 6-րդ —	99 »	62	»
Նոր 4%	85 »	75	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	100 »	75	»
— — 2-րդ —	100 »	37	»
— — 3-րդ —	100 »	62	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	75	»
— երկրորդ —	229 »	—	»
5½% բէնտա	103 »	37	»
Ռուկեայ բէնտա	163 »	50	»
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	— »	—	»
Նոր երկաթուղային բէնտա	100 »	—	»
5% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	135 »	75	»
— — թղթադ.	94 »	50	»
Գրաւ. թղ. Ազնվ. բանկի	99 »	50	»
Գիւղական բանկի	103 »	62	»
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	—	»
— —Ռութայիսի-18 և 43տ.	— »	—	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	95 »	87	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 »	62	»
Օդէսայի — —	96 »	—	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	— »	—	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրությունը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԶՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել ի գիտութիւն մեր ԿՈՎԿԱՍԻ պատուելի ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿՎԱՅԻՑ տեղափոխվել եմ ՎԱՐՇԱՎԱ, և դարձեալ ընդունում եմ ամեն տեսակ յանձնարարություններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒԷԳՈՐԾ լինելով, առնում եմ և ուղարկում եմ մեր յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ և դրա վերաբերեալ ապրանքներ։ Ցանօթ եմ նոյնպէս գաղանտէրիական և ուրիշ ապրանքների հետ։ Իմ հասցէն. ВАРШАВА, Товмасу ЯРГУЛЯНЦЪ. Переѣздъ, домъ № 3.

8—20 (Ե. Հ.)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որը հիմնաւորապէս ուսումնասիրել է ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ և ունի վկայական, ցանկանում է յարմար պաշտօն ստանալ։ Հասցէն իմանալու համար կարելի է դիմել „Մշակի“ խմբագրատուն։

4—4

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„КАВКАЗСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“.

Содержаніе газеты: частныя объявленія и рекламы, которыя принимаются къ напечатанію на русскомъ, французскомъ, нѣмецкомъ, армянскомъ, грузинскомъ и татарскомъ языкахъ; свѣдѣнія, имѣющія справочный характеръ, какъ-то: получаемыя въ Тифлисѣ телеграммы «Сѣвернаго агентства», биржевыя, промышленныя, торговыя и комиссіонныя справки, полицейскій, думскій и судебный бюллетени съ извѣстіями о банкротствахъ и торговой несостоятельности, некрологи, списки недоставленныхъ телеграммъ, такса на продукты, календарь, время отхода и прихода поѣздовъ закавказской желѣзной дороги и пароходовъ на Черномъ и Каспійскомъ моряхъ, а также срочныхъ экипажей во военно-грузинской дорогѣ; врачи и врачебная помощь, театры, зрѣлища, увѣдомленія о засѣданіяхъ обществъ, актахъ, юбилейныхъ и другихъ торжествахъ и народныхъ праздникахъ, свѣдѣнія о полученныхъ грузахъ и товарахъ и т. под.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городскимъ подписчикамъ:

На годъ съ дост. на домъ. 1. р. 20 к.
На полгода . . . . . — » 80 »

Иногороднымъ подписчикамъ:

На годъ съ пересылкою. . 1 р. 80 к.
На полгода » . . 1 » — »

Городскіе подписчики, получающіе какія-либо изданія, выходящія въ гор. Тифлисѣ, **платятъ**, по предъявленіи ими квитанцій на подписку въ контору газеты «**Кавказскія Объявленія**» и въ отдѣл., лишь **60 к. въ годъ.**

Для прочтенія «Кавказскія Объявленія» предлагаются публикѣ въ вагонахъ тифлисск. трамвая, въ подъѣзжающихъ къ Тифлису поѣздахъ закавк. желѣзн. дор. изъ Баку и Батума и срочныхъ экипажахъ по военно-грузинской дорогѣ. За помѣщеніе объявленій взимается по 4 коп. со строки петита. Подписавшіеся-же на газету «Кавказскія Объявленія», при сдачѣ объявленій не менѣе 15-ти разъ, пользуются большою скидкою по соглашенію съ конторою. Траурныя объявленія лишь на первой страницѣ; **плата** за каждый разъ **по 2 р.**

Контора и редакція газеты «Кавказскія Объявленія» помѣщается на Гановской улицѣ, при конторѣ нотаріуса **А. Г. Мамиконова**, а отдѣленіе—на углу Головинскаго проспекта и Барятинской улицы, въ павильонѣ Хиддекеля.

Адресъ для телеграммъ: Тифлисъ, «Кавказскія Объявленія».

2—3 *Редакторъ-издательница* **Н. П. Слинко.**

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ

ԲԱՐՁՐ ԴԱՍԱՏԱՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ։ Համաձայն է աշակերտներ և աշակերտուհիներ պատրաստել ստորին դասարանների համար, և կամ կրկնողություններ անել։ Ցանկացողները իրանց հասցէն կարող են թողնել „Մշակի“ խմբագրատանը։

5—5

Անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԱՏԻԼԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ մեր կոմիսիական գործն, որ սկսված է 1883 թվից շարունակվում է։ Դարձեալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանալու ու ճամփելու հետևեալ քաղաքներն. ՈՒԶՈՒՆ—ԱԴԱՑ, ՂԶԼԱՐՎԱԴ, ԱՍԽԱԲԱԹ, ՄԵՐՎ, ՋԱՐԺՈՒ, ԱՄՈՒՐԴԱՐԻԱՑ, ԲՈՒԽԱՐԱ և ՍԱՄԱՐՂԱՆԴ, որտեղ և ունեմ կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒ։

Նաև կատարում եմ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատվիրներ։

Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցէով. УЗУНЪ-АДА—Альберту Назарову.

8—12

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վ. օրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11¼—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամացաւի
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5½—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցումն են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտաղեան։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնությամբ։

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՕՎՍԿԻ



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ь)

Дозволено цензурою, Тифлисъ 29 Января 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.